ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԵՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Արխիվային վավերագրերի վկայությամբ՝ 1817 թ. Թիֆլիսում հայ համայնքն ուներ 25 եկեղեցի[1]: Այս թիվը անփոփոխ է մնացել մինչև Վրաստանի խորհրդայնացումը: Այսպես՝ 1904 թ. դրությամբ եւս Թիֆլիսում հիշատակվում է գործող հայ առաքելական 25 եկեղցիների մասին, որոնք բաժանված էին երկու գործակալությունների միջև՝ Ա եւ Բ (Ա մաս - Վանաց մայր եկեղեցի, Ս. Սարգիս, Հրեշտակապետաց, Կաթողիկե Ս. Գեւորգ, Բեթղեհեմի Ս. Աստվածածին, Կուսանաց Ս. Ստեփանոս, Քարափի Ս. Հակոբ, Մուղնու Ս. Գեւորգ, Նորաշենի Ս. Աստվածածին, Ջզրաշենի Ավետյաց Ս. Աստվածածին, Ս. Նշան, Տափի-թաղի Ս. Գեւորգ, Ջրկինյանց Ս. Կարապետ, Վերայի գերեզմանատան Ս. Խաչ[2], Բ մաս - Թանդոյան Ս. Աստվածածին, Կուկիո Ս. Աստվածածին[3], Չուղուրեթի Ս. Աստվածածին, Ս. Կարապետ, Ս. Մինաս, Էջմիածնեցվոց Ս. Գեւորգ, Շամքորեցվոց Ս. Աստվածածին, Ջորաբաշի Ս. Գեւորգ, Ս. Լուսավորիչ, Նավթլուխի Ս. Գեւորգ, Խոջի-վանքի Ս. Աստվածածին)[4]:

Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, վերոհիշյալ եկեղեցիները, բացի Մեյդանի Ս. Գեւորգ եւ Էջմիածնեցվոց Ս. Գեւորգ եկեղեցիներից, բռնագրավվեցին, ապա՝ նրանց մի մասը քանդվեց: Սկսած 2005 թվականից Վրաստանի հայ առաքելական եւ կաթողիկե եկեղեցիներն ու համայնքը պայքար են մղում կանգուն մնացած 11 հայոց եկեղեցիների վերադարձման համար: Հիշատակված եկեղեցիներից է Թիֆլիսի կենտրոնական թաղամասերից մեկում, վրաց առաջնորդանիստ Ս. Սիոն եկեղեցու մոտ գտնվող Նորաշենի Ս. Աստվածածինը, որի նկատմամբ եւս վրաց ուղղափառ եկեղեցին ունի չհիմնավորված հավակնություններ, եւ խնդրի կապակցությամբ պարբերաբար կրքեր են բորբոքվում:

Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցին հիմնադրվել է 1467 թ. եւ դարերի ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է մեծ ու փոքր վերանորոգությունների: Այսպես՝ 1650 թ. այն վերանորոգվել է Խոջա Նազարի կողմից, 1798 թ. եկեղեցին կրկին վերանորոգվել է Մելիք Ավետիք Բեհբությանի հրամանով, 1808-ին եկեղեցու վերանորոգությունը ղեկավարել է գործակալ Տեր Ղազարը՝ Մկրտում Մունթոյանի եւ մի քանի այլ նշանավոր ազգայինների աջակցությամբ[5]: Հայտնի է, որ 1830-35 թթ. եկեղեցու վերանորոգության վրա ծախսվել է 11563 ռուբլի 97 կոպեկ արծաթ[6]:

Ըստ մեր ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերի 1714 թ. Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու կառավարումը հաստատագրով հանձնվել է Մելիք Աշխարբեգ Բեհբությանին, իսկ 1818 թ., եկեղեցու ծխականների ընտրությամբ, եկեղեցու երեսփոխան է կարգվել

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.3792, թթ.1-14:

2 Հարկ է նշել, որ փաստաթղթում «Գործակալ Եկեղեցեաց Հայոց Ա. մասին Տփխիսայ» տպագիր բլանկի մեջ վերոհիշյալ 14 հայ-առաքելական եկեղեցիներից զատ, որոնք գտնվել են բուն քաղաքում, նշված են նաեւ՝ Նահանգական բանտի եկեղեցի, Ծիրանավոր ուխտատեղի եկեղեցի, Ծվինոդիսի Ս. Աստվածածին, Ծղնեթի Ս. Աստվածածին, Լիսի եւ Դեղումի եկեղեցի:

3 Կուկիո Ս. Աստվածածին եկեղեցին կոչվել է նաեւ Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցի:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.331, թթ.6 եւ շրջ., 72-73:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ.332, ց.1, գ.102, թ.4:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.2637, թ.16շրջ.:

Հովսեփ Թամամշյանը[7]: Գյուտ քին. Աղանյանը Թիֆլիսի հայոց եկեղեցիներին վերաբերող տեղեկագրում Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու մասին հիշատակում է հետեւյալ հետաքրքիր միջադեպը. «Հին պատկեր կայ Աստվածածնայ բեմի եւ աջ խորանի միջեւ որմի մէջ, որի մասին ասում են, թէ 1830 թ. մեծ քոլերայի ժամանակ լաց է եղել. եկել են ժամանակի նահանգապետը, ոստիկանապետը եւ այլն, կարծելով շինովի է, բայց տեսել են որ իսկ է, շինել են արձանագրութիւն պատահածի մասին: Այդ թուղթը կարծում է, որ Տէր Յովհաննէս Արարատեանի տանն է եղել եւ կորել է»[8]:

Հայաստանի ազգային արխիվում Թիֆլիսի Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու վերաբերյալ պահպանվում են հարյուրավոր փաստաթղթեր: Ստորեւ ներկայացվող 13 փաստաթղթերը արտացոլում են եկեղեցու պատմության զանազան խնդիրներ՝ վերանորոգություն, նվիրատվություններ հոգուտ եկեղեցու եւ նրան կից գործած Մարիամյան իգական դպրոցի[9], հոգաբարձուների կազմի հաստատում եւ այլն:

Ներկայացված բոլոր փաստաթղթերը հայտնաբերված են Հայաստանի ազգային արխիվի հավաքածուներից (N35 Վրաստանի եւ Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդարան, N53 Վրաստանի եւ Իմերեթիայի հայոց վիճակային կոնսիստորիա, N56 Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ, N148 Վրաստանի հայոց թեմական խորհուրդ)

Փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ, չնչին ուղղագրական ու կետադրական ճշգրտումներով:

ՍԱՀԱԿ ԱԲՂ. ՇԱՔԱՐՅԱՆ

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.1207, թթ.2-3:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ.332, ց.1, գ.102, թ.4:

9 Տե՛ս Թիֆլիսի Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցուն կից 1865 թվականից գործել է Մարիամյան իգական դպրոցը:

N 1

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ՝ ՆՈՐԱՇԷՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

31 Յունվարի 1857 թ.
Տիֆլիս

Ի Լուսաւորչեան Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի
Ի Վրաստանի եւ Իմերէթի Հայոց Վիճակային Կոնսիստորէ
Յայտարարութիւն

Ի Կոնսիստորիայիս լուեալ զվերջին յոդուած կոնդակի Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Ներսիսի ի 24-էն Փետրվարի անցելոյ համարաւ 72, յորում գրէ այսպէս. «Սովին գրութեամբ Կոնսիստորի համարաւ 36, ծանեաք եւ վասն անհոգութեանցն մերոց, յաղագս Սրապիոն Խաչակիր աւագ քահանայի սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Նորաշինոյ, եւ պատուարժան երեցփոխանք այնմ եկեղեցւոյ, յամի 1852, Յուլիսի 2, եւ Նոյեմբերի 30, խնդրագործութեանցն վասն նորոգութեանց կղմինդրաց տանեացն այնմ եկեղեցւոյ, եւ ի 27 Փետրվարի 1854 ամի համարաւ 358, խնդրանացն Կոնսիստորի առ ի մէնջ զլուծումն այնմ խնդրանաց նոցա, եւ ո՛չ ընկալնոյն ցարդ, որ աղագաւ, եւ այժմ այսու գրութեամբ Կոնսիստորի, առաքելոյն մեզ զիսկականն խնդրագրոյ Սրապիոն աւագ քահանային Տէր Մովսիսեանց, եւ պատուարժան Սողոմոն Բօտինեան երեցփոխանին մատուցելոյ ի Կոնսիստորն յամին անցելոյ ի Նոյեմբերի 8, համարաւ 13, վասն յիշեցուցանելոյ զնոյն խնդրագործութիւն իւրեանց: Այժմ ես ինքն զգալով զվնասապարտութիւն իմում մոռացկութեան, գրեմ Կոնսիստորին հրաման տալ Սրապիոն Խաչակիր աւագ քահանային եւ պատուարժան Սողոմոն Յովհաննիսեան Բօտինեանցին նորոգել զկրամիտն Նորաշէն եկեղեցւոյ»: Ի տեղեկութեանց գործոց Կոնսիստորիս երեւի, ատեանս առ առաջարկութիւն իւր ի 27-էն Փետրվարի 1854 ամի համարաւս 358, առ Վեհափառ Կաթողիկոսն, ի մասին շնորհելոյ սմին զլուծումն վերանորոգելոյ զխախտեալ կղմինդրս տանեաց Նորաշինու սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Թիֆլիզու, չստացեալ զպատասխանի ինչ, առաջարկութեամբ ի 21-էն Յունվարի անցելոյ համարաւս 36, մատուցմամբ իսկական յայտարարութեան Սրապիոն աւագ քահանայի Տէր Մովսիսեանց եւ Սոլոմոնի Բօտինեանց երեցփոխանի Նորաշէնու եկեղեցւոյն, կրկնեաց զմիջնորդութիւն իւր, յաղագս շնորհելոյ սմին զլուծումն վերանորոգելոյ զխախտեալ կղմինդրսն յիշեալ եկեղեցւոյ, առ որ եւ ընկալաւ ներկայ ամենապատուական կոնդակ Նորին Վեհափառութեան: Կարգաւորեցին. Համաձայն ներկայ ամենապատուական կոնդակի Նորին Վեհափառութեան, հանեալ հրաման աւագ քահանային Նորաշէնու

սուրբ Աստուածածին եկեղեցւոյ՝ Տէր Սրապիոն Տէր Մովսիսեանց, եւ երեց-փոխանի նորին Սօղոմոնի Բօտինեանց, պատուիրել նոցա ձեռնամուխ լինել ի վերանորոգումն խախտեալ կղմնդրաց ընդ տեսչութեամբ նոցա յանձնեալ եկեղեցւոյն չափաւորն ծախսարարութեամբ յարդեանց եկեղեցւոյն, զորս մի առ մի մուծանել ի մատեան արդեանց եւ ծախուց եկեղեցւոյն սահմանեալն կարգաւ, եւ զայսմանէ ամենախոնարհաբար յայտնել Լուսաւորչեան Հայոց Սինոդիդ սրբոյ Էջմիածնի:

Անդամք Կոնսիստորիայի աւագ քահանայ Իսահակ Սահառունի
աւագ քահանայ Սրապիոն ՏԷՐ ՄՈՅՍԻՍԵԱՆ
Մկրտիչ քահանայ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
Ի պաշտաման Ատենադպրի Յ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3531, թ.1 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

N 2

ԳՆԴԱՊԵՏ ԻՍԱՀԱԿ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ՝ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԿՊԱԿՆԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՆՈՒՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 Նոյեմբերի 1874 թ.
Տփխիս

Ի Լուսաւորչեան Սինօդն սրբոյ Էջմիածնի
Ի պօլկօվնիկ Իսահակայ Աբրահամեան Եւանգուլեանց
Յայտարարութիւն

Ես գոլով անժառանգ եւ տեսնելով թէ աւուրք իմ խոնարհին օր ըստ օրէ ի ծերութիւն, ցանկամ զերկուս կրպակս իմ կից սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Նորաշէնի Տփխիսայ մոմավաճառութեան աւագ պահարանի, որք անշուշտ հարկաւոր են նմին եկեղեցւոյ՝ ընդ քրիստոնէական ջերմեռանդութեամբ, այժմէն իսկ մինչ կենդանի եմ, թողուլ զայնոսիկ կրպակս իմ մնացեալս ինձ ի հայրենական ժառանգութենէ յանվէճ տիրապետութիւն իմ ի բազում ամաց հետէ ի յաւիտենական սեպհականութիւն նոյն եկեղեցւոյ, այնու եւ եթ պայմանաւ, զի յետ մահուան իմոյ եւ ամուսնոյս Նինոյի Գէորգեան անարգել թոյլատրել թաղել զմեզ զերկոսեանս ի դաւթի նոյն եկեղեցւոյ: Եւ առ ի ապահովութիւն այսր աստուածահաճոյ գործոյ իմով վասն անվէճ տիրապետութեան յիշատակեալ եկեղեցւոյն, զկնի համաձայնելոյ Սինօդիդ սրբոյ Էջմիածնի եւ տալոյ առ այն սահմանեալ կարգաւ զլուծումն ցանկութեան իմոյ, այժմէն իսկ ի կենդանութեան իմում ունիմ տալ հաստատել ի վերայ հիման օրինաց զօրինաւոր կուպչեայ անուանեալ կալուածագիր իմովք ծախուք առանց տալոյ եկեղեցւոյն զծախս ինչ առ այն: Իբր վաճառեալ յինէն երկու հազար ռուբլի դրամովք, զի մի՛ զկնի մահուան իմ

եւ ամուսնոյ իմոյ երեւեսցի ոք վիճող այնոցիկ իբրեւ ժառանգաւորք ընչից իմոց, որպէս բաղում օրինակք ինչպէս առաջ եկեալ են հաստատուն կտակաւ աւանդեալս եկեղեցեաց, ուսումնարանաց եւ այլոց զգումար ինչ կամ զկալուածս յարուցանել զվէճս:

Ուստի ամենախոնարհաբար խնդրեմ ի Սինոդէդ փութով առնել զտնօրէնութիւնս, գրելով առ փոխարքայն Կովկասու վասն հրամայելոյ ում հարկն է հաստատել յանուն եկեղեցւոյն զայնոսիկ կրպակս իմ, ընդ նմին եւ հրամայել երեսփոխանի նոյն եկեղեցւոյ Ստեփանի Ստեփաննոսեանց առ ի միասին մատուցանել ուր հարկն է զխնդիր վասն հաստատութեան կուպչայի, որում համաձայն է նա, եւ օգտաւոր յոյժ համարի վասն եկեղեցւոյն ընդարձակութեան պարսպի եկեղեցւոյն յարեւելեան կուսէ եւ կամ միացուցանելոյ ընդ կրպակի մոմավաճառութեան եկեղեցւոյն:

Եւ զարարեալ տնօրէնութենէ իւրմէ խնդրեմ ծանուցանել ինձ ի ձեռն Վիճակային Կոնսիստորի Հայոց Վրաստանի, որում եւ պատուիրել ունել ի վերայ այսորիկ զիւրն կարեկցութիւն վասն ի գլուխ տանելոյ զցանկութիւն իմ:

Պոլկովնիկ Իսահակ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ

ՀԱԱ, ֆ.56, ց.4, գ.2748, թ.1 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

N 3

ԳՐԻԳՈՐ ԻԶՄԻՐԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ ՄԱՐԻԱՄԵԱՆ ԻԳԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆԸ՝ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՐԱՇԷՆ ՏՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 Սեպտեմբերի 1878 թ.
Տփխիս

Տփխիսու Նորաշնոյ եկեղեցւոյ Մարիամեան օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութեան
Հոգաբարձու Գրիգոր Իզմիրեանցի
Առաջարկութիւն

Իմ առաջարկութենից այս տարուայ Յունիսի 10-ից Հոգաբարձութեանը արդէն յայտնի է, որ ես իմ յօժար կամօքս առաջարկեցի ընդունել, իբր նուիրատուութիւն, իմ երեք յարկանի քարաշէն տունը իրան նկուղներով, մերձ Թուրքի մէյդան կոչեցեալ տեղին, տասն եւ երկու խեղճ օրիորդաց ուսումն տալու՝ հանդերձ ուսումնական պիտոյքներով ձրիաբար, նորանցից ութը ի յիշատակ հանդուցեալ եղբօր իմոյ, Դանիէլի, երկուսը իմ եւ երկուսը իմ կնոջ Սոփիայի անունով, վճարելով միեւնոյն ժամանակը Անդրկովկասեան պրիկազի պարտքը – 9,480 ռուբլի 91 կ., որպիսի հաշուով, ըստ արժողութեան տան, այսինքն 16.000 ռուբլի, ես ուրեմն նուիրեցի 6,519 ռուբլի 9

կոպէկ, փոխանակ թղթիս մէջ ի 12 Յունվարի 1877 ամի համարաւ 84, խոստացած 4374 ռուբլու:

Որովհետեւ համաձայն 1011 յօդ. XI հատ. մ. 1 ամէն նուիրատուութիւնը, եթէ հինգ հազար ռուբլուց աւելի է, պէտք է լինի թոյլատրութեամբ Կայսերի, որի համար բաւականի ժամանակ պէտք է, իսկ այս միջոցումը հարկաւոր կը լինի հատուցանել Պրիկազին մի կողմանէ մայր գումարի մասն եւ միւս կողմանէ տոկոսիքները եւ այս ամէնը, մինչ՛ լուծումն ստանալը պէտք է փոխի իմ նուիրատուութեան գումարը, եթէ ես հատուցանեմ յիշեալ պարտքի մասն եւ տոկոսիքը եւ բացի սորանից անյարմար կը լինի ինձ համար հատուցանել տոկոսիքը մի կողմանէ Պրիկազին եւ միւս կողմանէ ուսումնարանին, վասն որոյ առաջարկում եմ հոգաբարձութեանը ընդունել յիշեալ տունը՛ի 1-էն առաջիկայ Հոկտեմբերի ընտանեկան կերպիւ, ապահովացնելով ինձանից որպէս եւ կամի ստորագրութեամբ, եւ, ստանալով նոյն թուից բոլոր եկամուտը, վճարել Պրիկազին հատուցանելու պարտքը իրա տոկոսիքներով, իսկ որ ինչ կը պատկանի ինձանից ուսումնարանին հասնելու տոկոսիքն ի 11 Յուլիսի այսր ամի մինչի 1-ն Հոկտեմբերի սոյն ամի ես ունիմ հատուցանել հոգաբարձութեանը:

Հոգաբարձու Գրիգոր Իզմիրեանց

ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3556, թթ. 44 շրջ., բնագիր, ձեռագիր:

N 4

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ԹԵԼԱՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՐԱՆՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 Յունիսի 1890 թ.
Ս. Էջմիածին

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի եւ Իմերէթի Սրբազան Մամբրէ եպիսկոպոսի՝ սիրելւոյ մերում ողջոյն եւ օրհնութիւն:

Համաձայն յայտարարութեանցդ ի 20 ամսոյս ընդ համարօք 349 եւ 350 մերով այսու Հայրապետական կոնդակաւ հաստատեմք ի պաշտօն հոգաբարձութեան վասն Ս. Մարմիամեան օրիորդական միդասեան ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյն Նորաշէնի քաղաքիդ՝ զբարեկրօն Գաբրիէլ քահանայն Ջիվանեան, զերեցփոխան յիշեալ եկեղեցւոյն եւ զմեծապատիւ Մի-

քայէլն Թամամշեանց, իսկ ի պաշտօն անձնափոխանորդութեան՝ զպատուելի Աղէքսանդրն Յովսէփեան Քիշմիշեանց, եւ վասն երկսեռից երկդասեան ուսումնարանաց Հայոց Թելաւ քաղաքի զբարեկրօն Գէորգ աւագ քահանայն տէր Սարգսեանց, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն, զհարգելիսն՝ զՅովհաննէսն Բաղդասարեան Բողդանեանց եւ զՄիքայէլն Գէորգեան Թադէոսեանց, իսկ ի պաշտօն անձնափոխանորդութեան՝ զպատուելիսն՝ զԳասպարն Յովհաննիսեան Մղդեսեանց եւ զՅովսէփն Ստեփանեան Ստեփանեանց. վասն որոյ պատուիրեմք դերապատութեանդ առաջադրութեամբք քովք հրաւիրել զնոցին Արժանանձնութիւնսն ի վարումն պաշտաման իւրեանց՝ ըստ ամենայնի համաձայն կանոնաց եկեղեցական ծխական ուսումնարանոց մերոց:

Ողջ լե՛ր ի Տէր:

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 12, թ. 7, բնագիր, ձեռագիր:

N 5

ՆԿԱՐԻՉՆԵՐ Վ. ՄԻՐԶՈՅԵԱՆՑԻ ԵՒ Մ. ԳՈՒՐՇՏԵՑՆԻ ԿԱԶՄԱԾ ՆԱԽԱՀԱՇԻՒՐ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ

27 Հոկտեմբերի 1899 թ.
Տփխիս

Նախահաշիւ

Կազմուած Տփխիսում 1899 թ. 27-ը Հոկտեմբերի Ս. Աստուածածին Նորաշէն եկեղեցոյ ներսի կողմից ամբողջովին նորոգելու համար

1. 4 սիւները ձիւթաներկով ներկել վերինը սպիտակ մարմարիոն, իսկ ներքինը՝ մոխրագոյն եւ ծաղիկները նորից նկարել – իւրաքանչիւրը 20 ր., 4-ը միասին – 80 ր.

2. Խաչկալը առաջին տեսակի ոսկեզօծել, կոտրածները նորից շինել եւ պատկերները ներկերով նորոգել, տախտակը սպիտակագոյն ներկել – 150 ր.

3. Ս. Ստեփանոսի եւ Ս. Լուսաւորչի երկու մեծ պատկերները նորից նկարել իւր շրջանակներով միասին – 40 ր.

4. 12 մեծ պատկերները նորոգել եւ շրջանակները նորից նկարել՝ իւրաքանչիւրը 12 ռուբլի, բոլորը միասին – 144 ր.

5. 115 փոքր պատկերները նորից նկարել իւր շրջանակներով, իւրաքանչիւրը 6 ռուբլի, բոլորը միասին – 690 ր.

6. Կաթողիկէի տակ Աստուծոյ պատկերը դեղերով մաքրել եւ մնացած եկեղեցոյ բոլոր թէ ծաղիկները, թէ հրէշտակները եւ թէ դատարկ տեղերը նորից ներկերով նկարել – 50 ր.

Սորա բոլոր գումարն է հազար հարիւր հիսունը չորս րուբլի (1154 ր.)
Նկարիչ՝ Վարդան Միրզոյեան Միրզոյեանց
չ ՋՈՋՏտՈրպՓ ԾՈՅԼ ԹսՈՊՈՎՈՐՏՋՈփ ԹյՐՔՅպով

ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.3399, թ.2, բնագիր, ձեռագիր:

N 6

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԵՐԶՆԿԵԱՆԻ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵ-ՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ ԿԱԶՄԱԾ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ

1902 թ.
Տփխիս
11. Նորաշէն Տփխեաց

Հաշուեմատեանը պահւում է կանոնաւոր, գրւում են մուտքը եւ ծախ-քը ամէն ամիս: Զափաբերական մատեանները միայն թերութիւններ ունին, որովհետեւ շատ արձանագրութիւններ կիսատ-պակաս են գրուած, օրինակ՝ անունը գրուած է, հօր անուն եւ ազգանուն չ՚կայ եւ այլն: Կայ ե՛ւ այն, որ մէկ երեսի վերայ վերեւից մէկ յօդուած է գրուած, իսկ ներքեւը ահագին տեղ դատարկ է, որ տեղ է թողնուած լրացնելու նպատակաւ, չկան եւ պա-հանջելի անձնաւորութեանց ստորագրութիւններ, հրաւիրեցի կարի եղած ուշադրութիւնը այսպիսի խոշոր պակասութեանց վերայ՝ նոյնպէս խնդրեցի իւրաքանչիւր ամիս արձանագրութիւնները վաւերացնել: Եկեղեցւոյ միա-բանները սոքա են 1) Գէորգ ա. քահ. Տէրտէրեանց՝ Ներսիսեան դպրանոցն աւարտած. 2) Դաւիթ քահ. Գերգիտեանց՝ տարրական ուսում առած. 3) Թադէոս քահ. Երուանդեանցն՝ ուսած Սանահնի վանքի ուսումնարանումն եւ 4) Սարգիս քահանայ Շիօյեանց՝ տարրական ուսում ստացած եւ ապա ընծայարանն աւարտած, վերջինս է եւ լուսարար: Նորաշէնի տիրացուները հետեւեալներն են 1) Սարգիս Ասլամազեանց՝ եղած Կաթողիկէ Ս. Էջմիա-ծին եկեղեցւոյ ծխական ուսումնարանումն. 2) Խաչատուր Տէր Յարութիւ-նեանց՝ ուսած Կօթի գիւղի ուսումնարանում եւ 3) Կիրակոս Գրիգորեանց՝ տնային կրթութիւն ստացած: Եկեղեցին ունի կալուածքներ - արեւմտեան կողմն Մարիամեան օրիորդաց ահագին ուսումնարանական շինութիւնը, որի վերին յարկը այժմ դիրեկցիայի ձեռքին է, միայն Հոգեւոր իշխանու-թեան կողմից վիճելի, իսկ ստորին յարկը պատկանում է եկեղեցուն, այս-տեղ է բնակւում ժամկոչը, եւս նախկին ժամկոչի այրին, վերջինս 3 ռուբլի ամսավճար տալով: Կայ երեք կրպակ արեւելեան կողմի փողոցումն – 37 ռուբլի ամսական վարձով: Եկեղեցին, առհասարակ, մաքուր է պահւում, չ՚ունի մայր մատեան իրեղենաց (ինվենտար), այդպիսին հարկաւոր է ձեռք բերել եւ ամենայն տարի ստացածները կանոնաւոր կերպով արձանագրել: Այստեղ չ՚կան նկատողութեանց եւ բացակայութեանց մատեաններ, երեց-

փոխան Բայսողոլեանցը, առհասարակ, անտարբերութեամբ է վերաբերում թէ՛ դէպի իւր պարտականութիւնները եւ թէ՛ դէպի Ատենի պայմանները կատարելը: Դրուած էին կանանց դասում մի քանի աթոռներ, վերցնել տուի, նոյնպէս եւ վերցնել տուի քահանայից նստելու աթոռները: Եկեղեցւոյ ներսը նոր է նորոգուած եւ զարդարուած անճաշակ պատկերներով: Այստեղ եւս հերթապահութիւն է լինում, միայն մշտապէս եկեղեցի են յաճախում Հայր Թադէոս Երուանդեանցը եւ Տ. Դաւիթ Գրիգորեանցը, ունի Բաւականին բացակայութիւններ Հայր Շիոյեանցը, Հայր Տէրտէրեանցը ծերութեան պատճառով եկեղեցի չի յաճախում: Տիրացուքն եւս մասամբ անճշտապահ են եւ կանոնաւոր չեն յաճախում:

Գրիգոր քահանայ ԵՐԶՆԿԵԱՆ

ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.327, թթ.28-29, բնագիր, ձեռագիր:

N 7

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՇՈՒՐՋԱՌՆԵՐ, ՍԱՂԱՎԱՐՏ ՈՒ ՎԱԿԱՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

27 Օգոստոսի 1903 թ.
Տփխիս

Համախօսական

Տփխիսու Նորաշէն սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ծխականներս յայտնելով մեր եկեղեցւոյ միաբանութիւնը եւ երեցփոխանը, որ կարօտութիւնը ունի նոյն միաբանութիւնը շուրջառների, սաղաւարտի եւ վակասի: Մենք ծխականներս տեսնելով, որ ճիշտ է այդ առաջարկութիւն եւ հարկաւոր է պատրաստել չորս միաբանի համար չորս հատ շուրջառներ, մի սաղավարտ եւ մի վակաս, առ այս սոյն համախօսական թերթով տալիս ենք իրաւունք մեր եկեղեցւոյ երեցփոխան պ. Բայսողոլեանցին պատրաստելու յիշեալ զգեստը եւ ծախսելու եկեղեցապատկան դրամներից չորս հարիւր ռուբլի եւ մանրամաս հաշիւ մուծելու տարւոյս հաշուեմատեանում. նախ եւ առաջ դիմել Հոգեւոր իշխանութեան եւ առաջարկել սոյն համախօսական եւ ստանալ թոյլտուութիւն:

(32 ստորագրութիւն)

ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.3067, թ.44, բնագիր, ձեռագիր:

N 8

ԳԱԲՐԻԷԼ ԹԱՄԱՄՇԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԵՂԲՕՐԸ ՆՈՐԱՇԷՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՒԹՈՒՄ ԹԱՂԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

26 Յունուարի 1908 թ.

Թիֆլիս

Նորին Բարձր Սրբազնութեան Վիճակաւոր
Առաջնորդի Հայոց Վրաստանի եւ Իմերէթի
Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի

Տփխիսու տոհմական պատուաւոր քաղաքացի
Գաբրիէլ Յովհաննէսեան Թամամշեանից
Խնդիր

Ամսոյս 24-ին վախճանուեց եղբայր իմ Միքայէլ Յովհաննիսեան Թամամշեանցն, ուստի խնդրեմ խոնարհաբար Ձերդ Սրբազնութիւնից թոյլ տալ թաղելու Նորաշէնի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւթում մեր տոհմական դամբարանում հանգուցելոյ ամուսնոյ Լիդիայի շիրմին կից:

Գաբրիէլ Յովհաննէսեան ԹԱՄԱՇԵԱՆՑ

ՀԱԱ, ֆ.35, ց.1, գ.355, թ.1, բնագիր, ձեռագիր:

N 9

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՓՐԻԴՈՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՆԱԽԱԳԱՒԹ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

6 Նոյեմբերի 1909 թ.

Տփխիս

Նորին Բարձր Սրբազնութեան Վիճակաւոր Առաջնորդի Հայոց Վրաստանի եւ Իմերէթի Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի

Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ գաւթում հարաւային կողմում թաղուած են Տփխիսու պատուաւոր քաղաքացի Գէորգ Գրիգորեան եւ նրա ամուսին Կատարինէ Աւետիքեան Փրիդոնեանցիները, ի յիշատակ այդ երկու հանգուցեալների նոցա ժառանգները նուիրել են եկեղեցուն՝ հօր մահուան պատճառով 17 տարի առաջ, երեք հազար ռուբլի, որ տուած են Տփխիսու Առեւտրական դրամատան ի շահեցողութիւն, եւ այդ գումարի տարեկան տոկոսիք եւ յատկացւում է յօգուտ եկեղեցական-ծխական ուսումնարանի,

եւ մօրն մահուան պատճառով այն ամի Մայիս ամսին, դարձեալ երեք հազար ռուբլի, որ ցայժմ ժառանգները պահած են իրենց մօտ տալով մի տարուայ տոկոսիքը, որպէսզի այդ դումարով հոգաբարձութեանս, հետ խորհրդակցութեան, գնեն մի կալուածք կամ այլ կերպ շահեցնել, որի արդիւնքով պահպանուի ուսումնարանս: Բացի դրանից հանգուցեալների ժառանգները միշտ համակրութեամբ վերաբերուել են ուսումնարանիս եւ սրա կարիքները իրենց սրտի մօտ ճանաչելով չեն զլացել միանուագ օժանդակել նրան զանազան ժամանակներում, որ եթէ ի հաշիւ առնէնք կ՝դոյանայ աւելի քան մի հազար ռուբլի:

Արդ, վերոյիշեալ ժառանգները՝ եղբարք Գրիգոր եւ Մնացական Փրիդոնեանները սոյն ամի Յուլիս ամսին ներկայացրին հոգաբարձութեանս մի մակարդակ վասն շինութեան եկեղեցւոյ հարաւային դռան եւ կից պատերի մօտ մի նախագաւիթ սրբատաշ քարից, որի մի մասի տակ ամփոփուած կ՝լինեն նրանց ծնողաց դերեզմանները՝ խնդրելով այն մակարդակը ներկայացնել Հոգեւոր Բարձր իշխանութեան եւ միջնորդել ստանալու նորա թոյլտուութիւնը նախագաւթի շինութեան համար: Հոգաբարձութիւնս՝ նախքան դիմելու Հոգեւոր Բարձր Իշխանութեան, բարւոք համարեց խորհրդակցել այս մասին Նորաշէնի եկեղեցւոյ ծխականների հետ եւ ապա դիմել Հոգեւոր իշխանութեան: Սոյն ամի Հոկտեմբերի 4-ին կայացաւ ծխական ժողով, որ քննելով մակարդակը եւ գտնելով, որ դրանով կառուցած նախագաւիթը կարող է համարուել իբրեւ զարդ եկեղեցու համար, որոշեց թոյլ տալ եղբարց Փրիդոնեաններին Այդ մակարդակով շինել նախագաւիթը, միայն մի պայմանով, որ նորա այն մասը ուր անփոփուած կ՝լինեն նոցա ծնողները փակած լինի, իսկ միջին եւ արեւելեան մասերը լինի բաց՝ աշակերտուհիների համար իբրեւ զբօսնելու տեղ: Բացի սրանից ծխականները միաձայն խնդրեցին հոգաբարձութեանս, որ սա բանակցէ եղբարց Փրիդոնեանների հետ, որ նոքա իրենց վերջի երեք հազար ռուբլի նուիրաբերութեանն աւելացնեն դարձեալ մի որոշ դումար, որպէսզի այդ երկու դումարով, հոգաբարձութեանս հետ խորհրդակցութեամբ, գնուի մի կալուածք յանուն Նորաշէնի Ս. Աստուածածնոյ եկեղեցւոյ, իսկ արդիւնքը գործածուի յօգուտ այն եկեղեցւոյ դպրոցին:

Սոյն որոշումն յայտնած էր հոգաբարձութիւնս եղբարց Փրիդոնեանցիներին իր ժամանակին, եւ ահա ամսոյս 3-ին Գրիգոր Գէորգեան Փրիդոնեանցը իր եւ իր եղբօր կողմից գրաւոր յայտնում է, որ ծխական ժողովի հետ լիովին համաձայն է նախագաւթի վերաբերմամբ, եւ իրենց կողմից նուիրում են դարձեալ երեք հազար ռուբլի վերոյիշեալ պայմանով, միայն թէ ընդ փոյթ ուղարկել մակարդակի հաստատութիւն քանի որ շինութեան պատրաստելու ժամանակամիջոցը սուղ է:

Ներկայացնելով ընդ սմին նախագաւթի մակարդակը, հոգաբարձութիւնս խոնարհաբար խնդրում է Ձերդ Բարձր Սրբազնութեան միջնորդել

Վեհափառ Կաթողիկոսի առաջ՝ ստանալու Նորին Օծութեան օրհնութիւնը նախագաւթի կառուցման համար որքան կարելի է շուտ, որպէսզի շինութիւնը պատրաստ լինի Մայիս ամսին հանգ. Կատարինէ Աւետիքեան Փրիդոնեանցի մահուան տարելիցին:

Հոդաբարձութիւն՝ Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆ
Գնդապետ Ա. Գ. ԹԱՄԱՄՇԵԱՆ

ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 544, թթ. 2 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

N 10

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԵՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ԻԳԱԿԱՆ ՈՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ 1908/09 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՆԱԽԱՀԱՇՈՒԻ ՄԱՍԻՆ

26 Նոյեմբերի 1908 թ.
Տփխիս

Նորին բարձր Սրբազնութեան
Առաջնորդի վիճակին Հայոց Վրաստանի եւ Իմերէթի

Ի հետեւումն առաջադրութեան Ձերդ Բարձր Սրբազնութեան յանուն Սարգիս Աւագ Քահանայի Շիօյեանց ի 10-ն սոյն Նոյեմբերի համար 992, Հոդաբարձութիւնս հարկ անձին համարէ առաջի առնել զնախահաշիւ Նոր-յաշէնի օրիորդական եկեղեցական ծխական դպրոցի վասն 1908/9 ուսումնական ամի, զհետեւեալն: Մուտք՝ 400 ռ. ի կալուածոյ Ղուզանեանցի ի Գանձակ քաղաքի, 142 ռ. զտոկոսիս Տփխիսոյ առեւտրական բանկի ի դումարի 3000 ռ. տոմսի, 1000 ռ. զթոշակ աշակերտուհեաց, 300 ռ. յարդեանց եկեղեցւոյ եւ 900 ռ. յօժարակամ տուրք ի ծխականաց, ընդ ամենը 2742 ռ.: Ծախք՝ 2430 ռ. եւ ռոճիկ ուսուցչուհեաց, 144 ռ. տարեկան ռոճիկ աղախնուն դպրոցիս, 200 ռ. վասն ուսումնական պիտոյից եւ 150 ռ. վասն մանր ծախուց, ընդ ամենը 2924 ռ.:

Ընդ սմին յայտնէ Ձերդ Բարձր Սրբազնութեան զի զտեղեկութիւն վասն ուսուցչուհեաց եւ ուսուցչաց ի սմին ուսումնական ամին Հոդաբարձութիւնս առաքեալ է յանուն Ձերդ Բարձր Սրբազնութեան ի 17 Յունիսի սոյն ամի համարաւ 13:

Հոդաբարձուք՝ Ա. Քիշմիշեան
Գ. Թամամշեան
Ա. Շամշինեան

ՀԱԱ, ֆ.35, ց.1, գ.388, թ.5 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

N 11

ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ԿՐՊԱԿՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 Ապրիլի 1910 թ.
Տփխիս

Ծանուցում

Անցեալ 1909 թ. Հոկտեմբերի 4-ին Նորաշէնի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ ծխականները որոշեցին վերջացնել ծխական տուրքը եւ ծխականներից հաւաքել մի գումար, որով եւ շինել հանդ. Իզմիրեանցի կտակած դատարկ դեռնի վերայ կրպակներ: Ծխականների այս որոշումն կատարելու համար ընտրեց մի մասնաժողով սոյն եկեղեցւոյ միաբան Սարգիս աւ. քահ. Շիոյեանից, դպրոցի հոգաբարձու Աղէքսանդր Քիշմիշեանից, եւ իրիցփոխ Գաբրիէլ Թամամշեանից:

Մասնաժողովս որպէս զի ձանձրութիւն չ՛պատճառէ ծխականներիդ այցելութեամբ՝ յարգոյաբար խնդրում է նրանցից, որոնք կցանկանան իրենց լուման ուղարկել կամ անձամբ կամ ուրիշի միջոցով յանձնելու մասնաժողովիս անդամ Սարգիս աւ. քահ. Շիոյեանցին, որի մօտ գտնւում է ստորագրելու համար Հոգեւոր իշխանութիւնից հաստատուած մատեան եւ անդորրագրի գրքոյկ, ուր իւրաքանչիւր ծխականը իր լուման կ՛ստորագրէ մատեանում եւ ի միամտութիւն նորա կստանայ անդորրագիրը:

Որովհետեւ այդ միանուագ նուէրով բոլորովին վերացւում է տարեկան ծխական տուրքը, վասն որոյ մասնաժողովս լիայոյս է, որ Նորաշէնի բարեպաշտ ժողովուրդը իր առատ նուիրաբերութեամբ կօգնէ նրան գլուխ բերելու շինութեան գործը, մի շինութեան որի արդիւնքը բացառապէս պէտք է գործ դնուի քառասունամեայ դպրոցի օգտին, որի յարատեւութեան եւ պահպանութեան համար Նորաշէնի ծխականներդ երբէք ոչինչ չէք խնայել եւ որի գոյութիւնը Ձեր սրտին մօտիկ էք համարել, լաւ իմանալով որ այնտեղ դաստիարակւում են եւ ձրիապէս ուսում ստանում թէ ծխականների եւ թէ ժամաւորների մանաւանդ չքաւորների զաւակները:

Մասնաժողովի անդամներ՝

Սարգիս աւագ քահանայ ՇԻՕՅԵԱՆՑ
Աղէքսանդր ՔԻՇՄԻՇԵԱՆՑ
Գաբրիէլ Զ. ԹԱՄԱՄՇԵԱՆՑ

ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 607, թ. 2, պատճէն:

N 12

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԳՏԻՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՆՈՒԻՐԱԾ ԿԱԼՈՒԱԾՔԻ ՄԱՍԻՆ

11 Նոյեմբերի 1910 թ.
Ս. Էջմիածին

Հրաման ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ Ս. Էջմիածնի Հայոց Սինօդից Վրաստանի Հայոց Կոնսիստորիային.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ հրամանով Սինօդումս լսեցին Կովկասի Տ. փոխարքայի անցած Սեպտ. 27-ի N21485 գրութիւնը, որով յայտնում է, ի հետեւումն ատեանիս միջնորդութեան, թէ այս տարուայ Օգոստ. 25-ին Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց թոյլ տալ Տփխիսի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցուն ընդունել ի սեպհականութիւն Տփխիսի Ա. կարգի վաճառական Տիգրան եւ Իսահակ Կարապետեան Վարդանեանց եղբայրների նուիրած կալուածը: Հրամայեցին. պատուիրել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային կարգադրել, որ Տփխիսի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցին ընդունի ի սեպհականութիւն Տիգրան եւ Իսահակ Կարապետեան Վարդանեանցների նուիրած կալուածը, որ գտնուում է Տփխիսի Ը. քաղաքամասում եւ որի նուիրաբերութեան համար արդէն ստացուած է Նորին Կայսերական մեծութեան Բարձրագոյն հաճութիւնը:

Սինօդի անդամ Սահակ Վարդապետ
Ատենադպիր Յ. Յովհաննիսեան
Գործավար (ստորագրութիւն)

ՀԱԱ, ֆ.53, ց.1, գ.3590, թ.1 եւ շրջ., բնագիր, ձեռագիր:

N 13

ՆՈՐԱՇԷՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԵԿԵՂԵՑԻՆ ՔԱՆԴԵԼՈՒ ՎՏԱՆԳԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 Յուլիսի 1925 թ.
Տփխիս

Վրաստանի հայոց թեմական եկեղեցական խորհրդին

Նորաշէն եկեղեցական խորհրդից
Յայտարարութիւն

Նորաշէն եկեղեցուն սպառնացող վտանգի պատճառով համաձայն խորհրդիս որոշման եւ դիմումին՝ խորհուրդդ համաձայնուեց եւ տրամադրեց մեզ իր լիազօր ներկայացուցիչ Գ. Ղալամքարեանցին՝ եկեղեցու իրաւունքները պաշտպանելու եւ ազատելու եկեղեցին քանդելու վտանգից:

Սորանով խորհուրդս պարտք է զգում յայտնելու իր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը Գ. Ղալամքարեանցի կատարած աշխատանքի մասին: Նա ամեն գործ դրեց եւ իր դիմումներով, ուր հարկն է՝ գրաւոր եւ բանաւոր, նշանակել տուեց մի քանի անգամ յանձնաժողովներ, բաղկացած ճարտարապետներից եւ մանաւանդ հնագէտներից եւ գիտնականներից, որոնք առ տեղումն զննելով եւ քննելով եկեղեցու ճարտարապետական կառուցուածքը եւ նրա գրաւած տեղը Տփխիսի հնագոյն եւ պատմական նշանակութիւն ունեցող եկեղեցիների մէջ, իբրեւ ուրոյն ճարտարապետական չէնք, որ իր ժամանակին գրաւել է եւրոպական ճանապարհորդների ուշադրութիւնը, կարեւոր համարեցին այդ եկեղեցու ամբողջական պահպանութիւնը:

Որոշուած է ձեռք չտալ եկեղեցուն:

Նախագահ խորհրդի Լեւոն Ս. ՄՀԷՐԵԱՆ
Քարտուղար Ս. քահանայ

ՀԱԱ, ֆ.148, ց.1, գ.12, թ.3 եւ շրջ., բնագիր, ձեռագիր: